

ԲՅՈՒԼԵՏԵՆ

Մարտ 2025թ.

Խորհրդի նիստ

Մարտին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ 14.03.2025թ. -ին:

14.03.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 9 հարց:

Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, օրենքի ուժով և դիմումի համաձայն Պալատին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի անդամակցության և աուդիտորական գործունեության հանձնաժողովների 2024թ. տարեկան գործունեության հաշվետվությունները հաստատելու, Պալատի անդամի և Պալատի անդամ կազմակերպության անդամակցությունը վերականգնելու մասին որոշումները: Այլ հարցերի ներքո տեղեկատվություն է ներկայացվել Որակավորման ծրագրի դասընթացների ձմեռային քննաշրջանի արդյունքների, Պալատի գրասենյակի ընթացիկ վերանորոգման աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ **04.03.2025թ. -ին, 17.03.2025թ. -ին և 27.03.2025թ. -ին**, որոնցում աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել ընդհանուր թվով 29 անձի, ինչպես նաև հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄՁ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **14.03.2025թ. -ին և 27.03.2025թ. -ին**, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատել ընդհանուր թվով 7 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ **06.03.2025թ. -ին**, որում կայացված որոշմամբ հավանության է արժանացրել «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի 2025թ. փետրվարի 28-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությունը:


Աուդիտորական գործունեության հանձնաժողով Պարզաբանում ԱՄՍ 620 կիրառման վերաբերյալ

Աուդիտորական գործունեության հանձնաժողովը հրապարակել է պարզաբանումներ՝ կապված ԱՄՍ 620 «Աուդիտորի փորձագետի աշխատանքի օգտագործումը» ստանդարտի կիրառման հետ՝ հաշվի առնելով թեմայի կարևորությունն ու արդիականությունը:


ՇՄՁ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

19.03.2025թ. -ին տեղի է ունեցել ՇՄՁ-«ՓՄԿ ՖՀՄՍ և (հանրային հաշվետվություն չունեցող դուստր ընկերություններ) ՖՀՄՍ 19 ընդհանուր դրույթներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը**:


21.03.2025թ. -ին տեղի է ունեցել ՇՄՁ-«Scope Decomposition – աշխատանքների արդյունավետ տրոհում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը**:



26.03.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«ԱՄՍ 230 – Աուդիտի փաստաթղթավորումը, ԱՄՍ 520 – Վերլուծական ընթացակարգեր» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Անժելա Գևորգյանը**:



28.03.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«Աուդիտորական ընթացակարգերի կիրառում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Էմիլ Վասիլյանը**:



Հանդիպում IFAC գլխավոր տնօրենի հետ

Ս. թ. մարտի 18-ին Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը Վիեննայում հանդիպում է ունեցել Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) գլխավոր տնօրեն Լի Վայթի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Պալատի՝ IFAC-ի լիիրավ անդամակցության և ՀԱԵԽ-ի՝ որպես ցանցային անդամ կազմակերպության ներգրավման հեռանկարները: Քննարկվել են նաև մասնագիտական համագործակցության ամրապնդման հնարավոր ուղիները: Հանդիպմանը մասնակցել են նաև IFAC ավագ մենեջեր Սարահ Գազնոնը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:



Համաշխարհային բանկի գիտաժողով. Վիեննա 17-19 մարտի, 2025թ.

Սույն թվականի մարտի 17-ից 19-ը Վիեննայում (Ավստրիա) տեղի է ունեցել Համաշխարհային բանկի ֆինանսական և կայունության հաշվետվականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված Կրթության և ֆինանսական հաշվետվականության մասնագետների համատեղ 11-րդ գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, խորհրդի անդամներ Հովհաննես Պետրոսյանը և Դավիթ Անանյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Հանրային վերահսկողության խորհրդի նախագահ Արման Պողոսյանը, նախագահի տեղակալ Կարեն Ալավերդյանը, Պալատի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՊՏՀ ներկայացուցիչները:

